

եւ ազգին կեանքին ու ճակատագրին հետ համա-
կամեցաւ գործնականին նուիրուելու: Ու փորձեց
նախ ելեքտրամեքենական աշխատանք, յետոյ ե-
ղաւ հանրակրթիկ պաշտօնէս, վերջապէս նախ-
ընտրեց նաւային գործակալութիւնը զոր վարեց
մինչեւ իր մահը, ժամանակ մը կատարելով մի-
անգամայն պանդոկապետութիւն: Պէտք է յիշենք
նաեւ իր երգուեալ թարգմանի պաշտօնը՝ որուն
միջոցով շատ օգտակար եղած է իր ազգայիննե-
րուն:

Ինչպէս կը վկայէ իր կենսագիրը Մ. Խ. (Այսօր,
2-1-53), Յովսէփ համակրական լայն շրջանակ մը
ստեղծեց Մարտիրոսի հայ դադութիւն մէջ շնորհիւ
իւր եռանդուն սրտին եւ մեծ ձիրքերուն, եւ այս-
պէս կըրցաւ լծուել ազգանուէր գործունէութեան
մը որ այնքան օգտակար եղաւ եւ կրնանք ըսել
նախախնամական, մանաւանդ նախնական շրջան-
ներուն:

Այսպէս ինք եղաւ որ աշակցութեամբ Աղաթօն
պէյի հիմը դրաւ Հայ Բարեգործական Ընդհ.
Միութեան Մարտիրոսի մասնաճիւղին: «Աշխատակ-
ցած էր, կ'ըսէ նոյն Մ. Խ., ազգային պատուի-
րակութեան Մարտիրոսի դրասենակին, ինչպէս
նաեւ երկար առէն հայկական Գաղթականական
օֆիսի ներկայացուցչութիւնը ձեռնհասօրէն վարած
էր: Մեծ համարում կը վայելէր Մինաս Զերազին,
որուն յորելինական յանձնախումբին եռանդուն
անդամն էր: Վերջին քանի մը տարիներն ալ,
կրկին վերադառնալով Հ. Բ. Ը. Միութեան, կը
վարէր մասնաճիւղի առեւտրային պաշտօնը:

Հաստատուոր կուսակցական եւ սիւներէն մին
Մարտիրոսի Ռամկավար Ազատական ակումբին...
Ծանօթ էր առհասարակ Փրանսահայութեան. իսկ
Մարտիրոսահայութեան ամէնուն: Չկար մէկը որ իր
հետ գործ ունեցած չըլլար:

Իր գրասենեակը՝ կարելի է ըսել, չորհրդային
գործակալութենէ մը աւելի՝ ժամադրաւայր էր:
Դժուարութեանց զէմ յանգիման դանուող ամէն
Հայ, ափ կ'առնէր Ուլուհոնեանի դուռը: Սիրով
ընդառաջ կ'երթար բոլոր խնդրանքներու, որոնց
երեսէն, երբեմն ալ կը տուժէր իր անձնական
աշխատանքը:

Ահա ամփոփ տողերով դեղեցիկ պատկերը մեր
սիրելի Յովսէփին, ուր կը յայտնուի նա իր ազ-
գասէրի ու անձնուէրի լաւագոյն ձիրքերով, ինչ-
պէս որ նոյն աղնիւ կենսագիրը կը շեշտէր կան-
խաւ. «Մարտիրոսի մէջ չի նսած էր համեստ համար-
մը որ ամէն գովեստէ վեր է: Ան, հոս, անխառն
անկեղծութեամբ, ի յայտ բերած էր ազգասէրի եւ
հայրենասէրի հանգամանքը»:

Եւ այդ է որ կը մխիթարէ անշուշտ մեր սգաւոր
սրտերը եւ հոգեկան անխառն գոհունակութեամբ
կը լեցնէ զինքը սիրող ու դաստիարակող Հայրերը
որ դեռ կ'ապրին ու տխրանոյժ զգացումներով
յաւիտենական հանգիստ կը մաղթեն վաստակաւոր
Յովսէփին:

Կը բաւէ միւս կողմէն կարգաւ նոյն «Այսօր»
թերթին մէջ (թ. 601. Դեկտ. 29. 1952) «Բառա-
շուք յուզարկաւորութիւնը» Յովսէփի, որ կարծես
պետական անձնաւորութիւն մ'ըլլար որուն դադա-
ղին կը խոնարհէր ամբողջ համայնք մը, առանց
կուսակցական կամ կրօնական խտրութեան:

Յուզարկաւորութեան պատարագն եւ արարողու-
թիւնը կատարուած է «Սէն Վենսան տը Փօլ» եկե-
ղեցին, Դեկտ. 23-ին, ու մարմինը թաղուած Սէն
Փիէր դերեգմանատունը: Մարտիրոսի Հայ Կաթո-
ղիկէ Ժողովրդապետ Գերյ. Յովհ. Ծ. Վ. Զու-
խանեանի յուզիչ դամբանականէն յետոյ խօսած են
նաեւ միւս կրօնական համայնքներու, ինչպէս նաեւ
Ռամկավար, Համախարբերդիական Միութեան,
եւ բազմաթիւ ուրիշ միութիւններու ներկայացու-
ցիչներ, կարգացուեր են զանազան Միութիւններէ
եւ անհատներէ ցաւակցական հեռագիրներ, որոնց
ամէնուն մէջ կը դրուատուէին Յովսէփի դեղեցիկ
հոգին ու ազգանուէր գործերը:

Մեր խորին ցաւակցութիւնը կը յայտնենք հոս
իւր բոլոր սիրելիներուն որ այնքան շուտ կորսն-
ցուցին զինքը, իր սգաւոր այրին՝ Տիկին Իսկու-
հին, իր Յովհաննէս, Գարբէլէ եւ Անթէլ զա-
ւակներուն, իր քրոջ եւ Լեւոն եղբոր (վերա-
բոյժ Խոսիկոյ Թարմա քաղաքին մէջ), իր Գերյ.
հորեղբորօրդուոյն որ Ուխտիս Ընդհ. Արքահայրն
է, եւ վերջապէս բոլոր զինքը սիրողներուն եւ
ճանչցողներուն:

Հ. Ե. Փ.

ԿՈԿԵԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՍՈՒԳԸ

1948-ի դարնան առաջին ցուրերուն հետ հեռա-
ւոր Ամերիկայի Լոս Անճելէս քաղաքէն Վենետիկ
կը հասնէր Պրն. Անդրանիկ Կոկեան՝ իր ազնիւ
տիկինը՝ Հեզելի հետ:

Օտար աշխարհ ծնած, ազգասէրի կարօտը սըր-
տին, ծիծեռնակի մը պէս Ս. Ղազար կու գար նա
իր ուխտական այցելութիւնը կատարելու:

Վանքին սրբավայր միջավայրը, ազգային մըթ-
նոլորտը, հայկական հինաւուրց յիշատակներն ու
սրբութիւնները զինքը չափէն աւելի հրապուրեցին
ու խանդավառեցին, եւ ինք հոգեկան մեծ փարու-
մով կապուեցաւ վանքի Գերյ. Արքահօր ու բո-
լոր Հայրերուն հետ՝ որպէս հայ ազգի հոգեկան
ու մտաւոր վերածնութեան առաքեալներու:

Ու առաջինին յաջորդեցին երկրորդ, երրորդ եւ
այլ այցելութիւններ, միշտ աւելի սիրով եւ մը-
տերմութեամբ. ու այնուհետեւ Անդրանիկ ինք-
զինք բոլորովին եղբայրացած զգաց Միաբանու-
թեան հետ եւ վանքին՝ որոնք այլեւս իրեն հա-
մար Հայրենիք էին ու ազգ:

Նա իր սէրը ուզեց թարգմանել բարերարու-
թիւններով՝ համեմատ Նախախնամութեան շնոր-
հած յաջողութիւններուն: Առաջադրութիւններ՝ ու-
րոնք բարի եւ ազնիւ սրտի ծնունդ էին:

Արդարեւ նա երբ տեսաւ մեր մենաւոր կղզին
հաղորդակցութենէ հեռու, «Դուք փոխադրութեան
միջոցի մը անհրաժեշտ պէտքն ունիք» ըսաւ, ու
ծրադրեց հոգալ միջոցներ վանքին յատուկ չորհ-
մակոյի մը համար՝ ի'ր իսկ նախաձեռնութեամբ:
Գարնան անոյժ արեւով օր մըն էր. վանք, վար-
դապետ, աշակերտ շարժման մէջ դրաւ կարծես
ու զանոնք առած իր գունեղ ժապաւէնին վրայ՝
ու զանոնք առած Ամերիկա. առանց խորհելու թէ իր
հետը տարաւ Ամերիկա. սրտին սիրտը եւ
կարգին վանքին կը թողուր իր ազնիւ սիրտը եւ
անգնահատելի բարեկամութիւնը: Տարիները
կ'անցնէին ու մեր բարեկամին յարգանքն ու սէրը
Միաբանութեան հանդէպ միշտ թարմ էր ու
միշտ ծագկուն դարուններու պէս:



ԱՆԴՐԱՆԻԿ ԿՈԿԵԱՆ

Վանքիս եւ Հոռմի մեր Հայրերն եւ ուսանողու-
թիւնը ամփոփող ժապաւէնը Ս. Ղազար վերադար-
ձաւ, ուր սպիտակ պատուոյն վրայ կը ժպտէր իր
բարի զէմքն ալ:

Տարիներ վերջ Նախախնամութիւնը կը շնորհէր
որ մեր Ընդհ. Արքահայրը Ամերիկա անցնէր. ինչ-
պէս եղաւ 1950-ի աշունը: Շատ մը ազնիւ եւ հիւ-
րասէր անհատներու եւ ընկերութիւններու կարգին
անմոռանալի կը մնայ Անդրանիկին ու իր բնաւ-

նիքին ցոյց տուած բացառիկ սէրն ու յարգանքը եւ հիւրասիրութիւնը հանդէպ մեր Արարհօր շարժումն մը ընթացքին իրենց չնչոյ յարկին տակ՝ Լուս Անճեւի մէջ. ինչպէս նշանակելի է Ֆրեդ-նոյի մէջ Միտրանութեան հանդէպ ցոյց տրուած բարեգործական շարժումին մէջ ալ իր կարեւոր դերը:

Ու հոս կ'ամփոփենք համառօտիւ իր ընտանիքի պատմութիւնը:

Անդրանիկ զաւակն էր Խարբերդցի Յակոբ Կո-կեանի, որ համիտեան տխուր օրերուն, 1890ական թուականներուն, զլուխ առած անցած էր Պոս-տոն: 1905-ին Պոլիս դարձած էր ամուսնանալով Հաճի Մարիամի հետ եւ կրկին Պոստոն վերադար-ձած, ուր Աստուած իրեն կը պարգեւէր երեք բարի զաւակներ. Անդրանիկ՝ ծնած 1906-ին, եւ յետոյ Յովհաննէս եւ Գէորգ: 1912-ին այդ ընտանիքը Ֆրեդնոյ կը փոխադրուէր անտեսական անձուկ պայմաններու մէջ, եւ ուր շուտով կ'որբանային երեք եղբայրները իրենց բարի հայրիկէն: Նախա-խնամութիւնը պահ մը կը ժպտէր անոնց վրայ նոր հայրիկ մը շնորհելով յանձին Հաճի Գրիգորի՝ 1920-ին: Ու քիչ վերջ մայր ու զաւակներ կ'անց-նէին Լուս Անճեւի, ինչպէս յետոյ նաեւ Գրիգոր: Այս անգամ մահը կու գար խլելու անոնցմէ կար-գաւ՝ հայր, մայր ու քոյրիկ մը. ու ըստովին որբացած խեղճ եղբայրները, կը զիմէին աշխա-տանքի. եւ շնորհիւ իրենց տոկուն եւ յարատեւ ջանքերուն կը յաջողէին տուն եւ զիւրք շինել Նա-խանամութեան նոր ժպտանքուն տակ:

Ու այդ յաջողութիւնները անոնք ծառայեցուցին՝ նուիրական նպատակներու. մէկ բառով՝ բարեգոր-ծութեան: Ասոր կը փաստեն իրենց առատ նուի-րատուութիւնները եկեղեցիներու, անոնց շինու-թեան ու բարեգործութեան, ու յետոյ Բարեգոր-ծականին, ներպաղթի, Ծերանոցի, վերջապէս որ-բին, այրիին, ազետեալին:

«Նրանի՞ ողորմածներուն, վասնզի անոնք ողոր-մութիւն պիտի գտնեն»: Կ'անցնէին տարիները,


բայց աւա՞ղ, արդէն անբուժելի քաղցիկը լոյն էր դրեր Անդրանիկի մէջ՝ զոր կը զգեսնէր: Զինքը սիրող ցաւազին եղբայրն ու տիկինը մեզի հա-ղորդեցին այդ տխուր լուրը. ու մենք աղօթեցինք երկար, հաւատքով՝ որ Աստուած խնայէր Անդրա-նիկի թանկագին կեանքին: Բայց Աստուծոյ ծրա-դիւրը բոլորովին տարբեր էր: 28 Նոյեմբերին հե-ռազիրը մեզի կը դուժէր բօթը սիրելի Անդրանիկի մահուան, ու մեզի կը մնար համակամիւ Աստու-ծոյ կամքին ու յաւիտենական երանութիւն մտա-թել իր հոգւոյն:

Բարիներու մահը յաղթական անցք մըն է եր-կրէս երկինք: Այդ կը ցուցնէր Անդրանիկի յու-ղարկաւորութիւնը Դեկտ. 1-ին: Ոչ սպաւորներու թիւը կարելի էր համբել եւ ոչ փունջներուն, պը-սակներուն, դրասանդներուն ու կամարներուն, ու-րոնք աղաղակող փաստեր էին իր բարութեան ու բարեգործութիւններուն:

Յաւիտենական հանգի՛ստ իր բարի հոգւոյն, եւ երկնային միութարութիւն իր ազնիւ եւ բարի Հեղը-լին, եւ Յովհաննէս ու Գէորգ եղբայրներուն, եւ բոլոր սիրելիներուն, որոնց կը թողու ողբ. իրը լաւագոյն կտակ եւ անկապտելի ժառանգութիւն՝ իր բարի եւ բարեբար սրտի դերագանց օրինակը, որ միայն կրնայ տալ երկրիս վրայ լաւագոյն դո-հունակութիւնը եւ երկնքի մէջ լաւագոյն վար-ձատրութիւնը:

Կեանքի անիւին հետ Ս. Ղազարու մէջ տարուէ տարի եկող ամէն սերունդի զիմաց՝ սպիտակ պաս-տառին վրայ պիտի պատկերանայ ազնիւն ու սի-րելի Անդրանիկ, իր բարի զէմքով, իր անսլշ ժպտով, ի՞ր իսկ նուիրած ժապաւէնին վրայ՝ մեր Հայրերու հոյլին մէջ եղբայրացած, ու ամէն ան-գամ վանքի այդ խնկարոյր լուսութեան եւ աղօթք-ներուն մէջ ամէն սրտէ պիտի թռչի «հոգւո՛ց» մը բարեկամ եւ բարեբար Անդրանիկ Կոկեանի հոգւոյն՝ անբաժան իր սիրելի ընտանիքին յի-շատակով:

Հ. Ե. Փ.



Նկ. Յ. Աճէմեանի

Սակաւաթիւ օրինակներով տպագրուած այս աստուածային զիրքը զանձը պիտի ըլլայ ամէն հայ տան՝ ուր պիտի տանի ճշմարտութեան լոյսին հետ երկնային խա-ղաղութիւնը:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՐԴԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
Հ. ՄԵՍՐՈՊ Վ. ՃԱՆԱՇԵԱՆԻ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

Վերաճնունդի շրջան - Առողջական գրականութիւն - Զարթոնքի սերունդ - Աշխարհաբար գրականութեան զարբերու և գրական շրջան -

Հմտալից և մանրամասն ուսումնասիրութիւն դարերու և գրական շրջան-ներու, հեղինակներու կեանքին և գործերուն պայծառ վերլուծումներով, մատենագիտական ցուցակներով և բուսանկարներով, ի յայտ բերելով հետա-քրքրական նորութիւններ գիտնենք և մամուլի անյայտ խորշերէն:

Գիտել՝ (Italie)

Imprimerie Arménienne — St. Lazare

VENISE